


ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱԳԻՐ
 Ե. ՓՈՐՈՍՍԵԱՆ
 ՆԱԽԱՆ ԿԱՐ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
 ՊԵՏԻ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԲՈՒՐԻ
 ԳԱՇՏԷ (Հասցեագրիչ)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵԳԻՍՏՈՒ ՇԱՐԱԹ
 Տարեկան, ողջ դանկն. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ
 Տարեկան Ֆրանկ 20
 Վեցամսեայ » 12
 ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐԻ ԿԱՆՏԻԿ Է
 ՆԻ ԹՂՊԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ
 Խմբագրութեան վրայ:
 Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'են տրուիր:

Օրմանեան Պատրիարքի հրատարակա-
 նին առթիւ ֆրանսական Թան լրագիրը 18
 Սեպտ. 99 թուականով հետեւեալ խմբա-
 գրական տեսութիւնը կ'ընէ.

Ի Կ. ՊՈԼԻՍ

Թէեւ հանրային կարծիքը սկսած է
 վարժուիլ հրատարականի առաջարկութիւն-
 ներու ու մեթոտներու փոքրիկ խաղերուն,
 որոց մէջ կը գտնան այս պահուս Սուլ-
 թանին և Հայ Պատրիարքին արտաքին յա-
 բարեբուծիւնները, և սակայն անպատեհ
 չենք համարիր մասնանի ընել նոր միջա-
 դէպը, որ ծագած է Գում-Գաբուի և Երւ-
 տըղ Բէօզլի միջև: Կ'ըսուի թէ Օրմանեան
 Պատրիարք այս անգամ շատ անկեղծօրէն և
 նոյն իսկ իւր բոլոր ուժովը կ'ուզէ առանձ-
 նանալ հոն՝ ուսկից զզպացած է անշուշտ ե-
 լած ըլլալուն: Վարչութիւնն եւս միաձայ-
 նութեամբ որոշած է ընկերանալ Պատրի-
 արքի այս քայլափոխին:

Ինչպէս կ'երևայ, ճշմարիտ տագնապ
 մ'է որ կ'սկսի և ասիկայ կը պատահի այն-
 պիտի վայրկեանի մը՝ որ Հայոց Պատրիարքը
 Սուլթան Ապտ-իւլ-Համիտի երախտապարտ
 բարեհաջակամութեանը վրայ շատ լուրջ և
 շատ իրական իրաւունքներ ստացած էր:
 Միթէ հաւանած չէ՞ր Լահէյի համաժողո-
 վին ուղղել տեսակ մը բարի վարուց վկա-
 յագիր «Հաւատացեալներու Պետ»ին հա-
 մար և ժպիրհ յայտարարութիւն մը Անա-
 տօլուի մէջ բարեկարգութեան վերահաս-
 տատման ու ժողովուրդներու գոհացման
 մասին, ու ասով Հայերու և Երիտասարդ-
 թիւրքերու պահանջներէն նախազգու-
 շացնել վեհանձն մը: Երկուսն ալ զոգէն քիչ
 ենթակայ գիւտնազիտութիւն մը:

Այսպիսի քայլ մը թերեւս առիթ ե-
 ղաւ Օրմանեան Պատրիարքի մեկուսացման
 ծարաւը զգալուն, ամօթոյ զգացումի մը
 վերջին համը և դառնութիւնը տալով բա-
 նոր: Բայց գոնէ այդ քայլը իրեն ապահո-
 ված ըլլալու էր իւր վեհապետին երախ-
 տապարտութիւնը, եթէ՛ վեհապետները
 ընդհանրապէս և Ապտ-իւլ-Համիտ մասնա-
 ւորապէս, գէթ քաղաքական առաքինու-
 թիւններու կարգը դատած չ'ըլլային սրտի
 անկախութիւնը: Ինչ որ է, կէս մը վարչա-
 կան, կէս մը կրօնական մութ վէճեր ա-
 նանկ անտաննի վիճակ մը ստեղծեցին որ,

հայերու կրօնական ու քաղաքական իշխա-
 նութիւնները պարտականութիւն համարե-
 յին իրենց հրատարականը տալ:

Շատ հուանական է որ հարստահա-
 բութեանց վերսկսումը, որոնց զոհ են Հա-
 յաստանի դժբաղդ բնակիչները, թերեւս
 անուղղակի և լռելեայն ունեցած ըլլայ իւր
 բաժինը այն պատճառներուն մէջ, որք այս
 քայլափոխը առաջ բերին: Ամենատագնա-
 պարի զրոյցներ կը շարունակեն պարտիլ
 այնքան վրասուած այս ազգաբնակիչութեան
 կացութեան վրայ: Քրդերը, իրենց ոճիր-
 ներու անպատիժ մնալէն քաջաբերած,
 վերսկսեցին իրենց արշաւանքները հայե-
 րու մնացեալ մասին վրայ: Նորէն շարքեր
 տեղի ունեցեր են, թէև առ այժմ ո'չ ընդ-
 հանուր: Փոխանակ պաշտպանելու այնքան
 տառապած ցեղի մը թշուառ բեկորները,
 Օսմանեան իշխանութիւնները՝ մասնաւորա-
 պէս Ատանայի, Տիւրքմանակերտի և Բաղէշի
 կուսակալութեանց մէջ, որքերը արտաքու-
 սելէ, որքանոցները կործանելէ վերջ, փակ-
 ուած են կատարեալ ձեռնպահութեան մը
 մէջ, ուրկէ միայն երբեմն պիտի ելնեն,
 կատարելու համար մի քանի նոր անարգա-
 բութիւններ ևս իրենց հպատակներուն դէմ:

Այս իրողութիւնները պէտք է որ գիտ-
 ցուին, ո'չ միայն անոր համար որ Երոզպան
 չափէ իւր պատասխանատուութիւնը, հայ-
 կական առաջին սարսափներու վերսկսու-
 մէն առաջ — եթէ նորէն պիտի թոյլատրուի
 այս գայթակղութիւնը — այլ և որպէս զի
 հանրային կարծիքը, միայն նիւթական շա-
 հերով կամ Անատօլի երկաթուղիներու
 շինութեան աւելի կամ նուազ շահաւոր
 պայմանագրութեանց բանակցութիւններով
 չ'զբաղի:

Չենք գիտեր թէ Պատրիարք և վար-
 չութիւն համարձակա՞մ են վախկոտ ակնար-
 կութիւն մը գոնէ ընել այնպիսի իրողու-
 թիւններու վրայ, որոնք շատ ծանօթ են և
 շատ խօսքի նիւթ են եղած ի Կ. Պօլիս: Ա-
 մէն պարագայի մէջ, չը թուիր թէ Սուլ-
 թանը տրամադիր ըլլայ, կամ դիմագրաւել
 այնպիսի տագնապի մը որ առաջ պիտի
 գար Օրմանեանի և իւր օգնականներուն
 միաժամանակ քաջուելէն, և կամ հարկ
 եղած միջոցները ձեռք առնելու, որպէս
 զի Պատրիարքին դժգոհութեան պատ-
 ճառները վերնան և հայերու մնացորդները
 վայելն վերջապէս քիչ մը հանգստութիւն

Այս վերջին պարագան պարզապէս ցնորք
 մ'է ամենուն համար, ի բաց առեալ անոնց-
 մէ որք շահ ունին կեղծելու յատահութիւն
 մը, որը ամեն իրողութիւն կուգայ հերքել:
 Գալով առաջին կէտին, Ապտ-իւլ-Համիտ գի-
 մած է իր սովորական ճգճոյմը քաղա-
 քականութեան: Մերժած է հրատարականը
 և կաղմած է մասնաւորապէս մը երկու բարձ-
 րաստիճան Թիւրք պաշտօնեաներէ և տրիս-
 րահուչակ Թարութիւն Տատեան հայ բաշա-
 յէն, պաշտօն տալով անոր քննել Պատրի-
 արքին և վարչութեան առաջ բերած գան-
 գատները ու փնտռել համաձայնութեան մը
 խարխիւները:

Ամեն անոնց համար որք քիչ շատ վար-
 ժուած են Տաճկաստանի դարձեալ ընթաց-
 քին, ահա ասիկ թաղուած խնդիր մը եւս:
 Յայտնի է թէ ի'նչ կ'արժեն և ի'նչ կ'ար-
 սագրեն այդ քննութիւնները: Այդ պաշ-
 տօնին կանչուած մարդիկ կը հասկնան Տի-
 րոյ տրամադրութիւնները, կէս բերան ակ-
 նարկութիւններէ: Թարութիւն բաշան չ'է՛
 որ պիտի պատուէ վարագոյցները, որոնց
 տակ հաճոյակատարօրէն կը պահեն իւր ժո-
 ղովորդին ցաւերը, և որ առնաբար ձեռք
 պիտի առնէ ազգային գատը, արտասանե-
 լով վերանորոգման, դասաւարտութեան և
 բարեկարգութեան պիտանի խօսքերը: Թե-
 րեւս Բ. Գրան դիւաններուն մէջ տեղեկագիր
 մը աւելի պիտի գտնուի: Պատրիարք ու
 վարչութիւն անգամ մ'ալ պիտի հանդու-
 ժեն իրենց պաշտօնին վրայ մնալու մեղ-
 միկ բռնագատութեանը: Պարզ է սակայն
 որ այս միջոցներով չ'է որ շարժարուած Հա-
 յաստանը պիտի դադրի մարտիրոսանալէ,
 կամ դժբաղդ Տաճկաստանը պիտի վերա-
 գտնէ քիչ մը խաղաղութիւն, կարգ ու ա-
 աղատութիւն:

**Կ. ՊՅԼՈՅ ՅԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔԸ**

Անցեալ շաբթուան սուրհանդակով հասնող
 երոզպան թերթերուն մէջ կը կարգանք հեռա-
 գիրներ՝ ծանուցանող թէ Օրմանեան Պատրիարք
 իր հրատարականը տուած է Սուլթանին և թէ
 թաւն ժողովն ալ հետեւած է անոր օրինակին:
 Թէ ի'նչ են Պատրիարքի հրատարականի-
 շարժառիթները, կամ թէ ո՞ր աստիճան կարելի ո՞
 վտան ըլլալ թէ այս հրատարականն ալ խաղ չ'
 չէ ասիկ ատուաններուն պէս՝ ժողովուրդը խայր
 բձով հանգարտեցնելու համար, — այդ ամէնը

քննել զուրա է ներկայ յօրուածիս նպատակէն և նոյն ժամանակ և ներկայ յօրուածիս նպատակէն և նոյն ժամանակ և ներկայ յօրուածիս նպատակէն

ներկայ յօրուածիս նպատակն է թողնել պատմական ակնարկով մը ցոյց տալ ա՛յն քաղաքական գիրքը եւ նշանակութիւնը, որ ունի Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքը, եթէ սակայն այդ պաշտօնը վարող անձը իր կոչման արժանի մէկը ըլլայ:

Ներսէս Պատրիարքէն առաջ՝ Հայոց Պատրիարքներ կը փոխուէին, կը հրաժարէին, կը մեռնէին, ու եւրոպական թերթերը ոչ միայն հետագիր մը չէին հրատարակել այդ անցքերուն վրայ, այլ մինչեւ իսկ անգամ մը անոնց անունը չէր տեսնուել այդ թերթերու մէջ: Ի՞նչ էր այդ բոլոր Պատրիարքներու եւրոպայի աչքէն աննշմարելի անցնելուն պատճառը: Պատճառը ա՛յն էր որ այն ժամանակները հայ ժողովուրդը ազգային քաղաքական կեանքի մը նշանները չէր երեցներ իր մէջ, այլ կը կազմէր լոկ կրօնական հասարակութիւն մը՝ որու ներքին ինքնամփոփ գործերը ու էլ յայտնի կամ ոչ զգալի առնչութիւն մը չէին ներկայացնել եւրոպական շահերու հետ: Այդ կրօնական հասարակութիւնը ուշադրութեան արժանի ոչինչ չէր ներկայացնել նաեւ այն պատճառով որ իր անախատիկ կացութեանը ու իր վրայ գործադրուած հարստահարութիւններուն նա կը համբերէր «քրիստոնէական» համակերպութեամբ, ու ձայն մը չէր հաներ:—Եւրոպայի առջեւ հայկական խնդիր մը չկար: Այդ ժամանակ հայ հասարակութիւնը եւրոպայի աչքին՝ աննշան ամբողջ միջավայրի մէջ, կամ թէ ըսենք՝ տարբերութիւն մը չունէր Հրեայներէն, ու Հայոց Պատրիարքն ալ, իր պարզ կրօնապետ մը՝ կրնար նմանցուիլ Հրէից Խախմուտի մը հրաժարման, փոփոխութեան կամ մահուան առթիւ ա՛լ ու է է հետագիր մը տեսնուած չէ երբեք եւրոպական թերթերուն մէջ:

Դայց երբ ներսէս Պատրիարքը եկաւ, հայ ազգին դիրքը փոխուեցաւ. քաղաքական աշխարհի առջեւ ներսէս, սահմանադրական Ընդհանուր Ժողով մ'ալ ունենայով հետը, առաջին անգամ եւրոպայի առջեւ դրաւ հայերու քաղաքական վիճակը, պարզեց ո՛չ իր լոկ կրօնական հասարակութիւն մը, այլ իր ազգ մը՝ մեր գոյութիւնը պահպանելու իրաւունքները, մատնանիչ ըրաւ հարստահարութիւնները որոնց հանդէպ կրաւորական գոհի սղորակի դերը ունենալու չէինք հանդուրժել այլ եւս. քաղաքական ձգտումներ ձեռակերպեց, ազգային սեփական կեանքի պահանջներ ներկայացուց: Ա՛յն օրէն եւրոպան չահագրգռուեցաւ. Հայերով, Հայոց Պատրիարքարանը գաղտնցաւ ըլլալէ Խախմուտուն մը, այլ նկատուեցաւ հայերու քաղաքական դիւանատունը (chancellerie), վարչական կամ դիւանագիտական պաշտօնատուն մը, ու կամաց կամաց գէպքերն ալ եկան հաստատեցին թէ Հայերը իրօք լոկ կրօնական հասարակութիւն մը չեն այլ եւս, այլ անախալիկ կերպով իրենց վրայ ի հանդէս կը բերեն քաղաքական ազգի մը յատկանիշերը, ընդհանուր մարդկութեան հետ ապրող եւ իր ճակատագրին գիտակից եւ տէր դառնալու ձգտող ժողովուրդի մը արժանիքը եւ բարեմասնութիւնները: Ա՛յն օրէն գեազմական յաճախակի այցելութիւններ կ'ընդունէր Գուստֆօրտի Պատրիարքարանը, Պատրիարքին քաղաքական յիշատակագիրները լուրջ ակնածանքով կ'ընդունուէին եւ Հայոց իղձերը հանգամանքներու ներածին շարժով ի հայելու եւ ի նկատ կ'առնուէին. դադրած էինք զանցատեղի քանակութիւն մը նկատուելէ: Սան-Սթէֆանօ գիմում մը բաւական կ'ըլլար 16րդ յօրուած մը ըստեղծելու: Պեւիլնի գիմում մը 61րդ յօրուածը ստորագրել կուտար ո՛չ միայն վեց մեծ Պետութեանց, այլ եւ մեր վրայ տիրող կառավարութեան, որուն գարեհի ի վեր խոնարհ պաղատանքներով եւ ստրկական սղերասնքներով միայն կարող էինք գիմուկ եւ որը հիմա կ'ստիպուէր մեզ նկատմամբ որոշ յանձնառութիւններու տակ մտնել՝ օտար Պետութիւններուն մեր կողմէ եղած գիմումի մը արդիւնքով: Այսպիսի հանգամանքներու մէջ եւս:

քաղաքական մասուլք չէր կրնար անտեսել հայերու իր քաղաքական ազգ մը որոշ կարեւորութիւնը թուրքի մէջ եւ այն մեծ դերը որ անոնք կոչուած են կատարելու արեւելեան կնճառ հարցին վերաբերմամբ: Քաղաքականապէս այդքան կարեւորութիւն ստացող երկուք ու կէս միլիոն ժողովուրդի մը կրօնական եւ քաղաքական շահերուն ներկայացուցիչը ճանչցուող մէկը — Հայոց Պատրիարքը — բնականաբար չէր կրնար վերաբերել եւրոպական մասուլքի ուշադրութիւնէն, այլ կ'ունենար մեծ նշանակութիւն եւ հեղինակաւոր դերք անոր առջեւ: Այս պատճառաւ, ո՛չ թէ պատրիարքական փոփոխութիւններ կամ հրաժարականները, այլ Պատրիարքներու աննշան քայլափոխներն անգամ սկսան ուշադրութեան առնուիլ եւ հետագրով տեղեկագրուիլ եւրոպական թերթերուն:

Ուրիմն ներսէսի ժամանակէն յեղաշրջում մը կատարուեցաւ Պատրիարքարանի քաղաքականութեան մէջ. Պատրիարքարանը քաղաքական բարձր դիրք ստացաւ օտարաց առջեւ: Բնականաբար Հայերս այս բանին գիտակից, իրաւունք ունէինք քաղձալու որ ներսէսէն վերջ մեր Պատրիարքները ճանչնան իրենց դիրքին բարձրութիւնը, քաղաքական բնաւորութիւնը եւ կարենան այդ բարձրութեան վրայ կենալ եւ այդ բարձրութեան վերայէն հսկել եւ պաշտպան հանդիսանալ ազգային գերագոյն շահերուն: Այդ ժամանակէն Հայերս գարձանք ուշադիր Պատրիարքարանի անց ու դարձնուեց, սկսանք մանրակրկիտ հետազննութեամբ դիտել մեր Պատրիարքներու արարքները, հսկել անոնց շարժմանց վրայ եւ ուսումնասիրել անոնց քաղաքականութիւնը. մէկ խօսքով — եւ իրաւամբ — սկսանք անոնց նկատմամբ խստապահանջ ըլլալ:

(Շարունակելի) ՄՏՐԱԿ

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵՆՏՔԷ

120 Երեւանէրէ բաղկացած այս գրքոյկը կը պարունակէ Պերճի (Մ. Տամատեան) հայրենասիրական ոտանաւորները:

ԳրճԵ Ե 5 զուռ ողջ
կը գտնուի խմբագրութեանս քով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Մուգաքքամի նախորդ յօրուածի շարունակութիւնը

Քաղաքական ժողովը երէկ կէս օրէ վերջ ժամը 5ին ի նիստ գումարեցաւ. Հայոց Առաջնորդարանին մէջ, ուր Երեսփոխանական ժողովոյ անդամներէն ալ ոմանք ներկայ էին:

Դրանօթ հանրագիրը մատուցանող չորս պատգամաւորներէն երկուքը միայն ներկայացան եւ ըսին թէ իրենք այդ խնդրէն ձեռնպահ կը մնան եւ թէ գաղթական հայերը իրենց կողմէ տասն երկու ներկայացուցիչներ կարգած են: Ուստի ժողովը որոշեց որ հետեւեալ օրը (կիրակի) քահանան Եկեղեցւոյ մէջ Պատարագէն առաջ յայտարարէ թէ յառաջիկայ հինգշաբթի կէս օրէ վերջ Խառն ժողով պիտի գումարի, որպէս զի Պատրիարքի անուան յիշատակութեան համար ներկայացուցիչներուն հետ խորհրդակցին, եւ արուելիք որոշումին վրայ համաձայնին:

Այսօր տեղւոյս հայերու կողմէն մեզի պատգամաւորութիւն մ'եկաւ, որ կ'ըսէ թէ տեղացի հայերը այս խնդրոյ մէջ բնաւ հակառակ չեն գաղթականներուն, եւ ընդհատ կտուակը անոնք ալ յայտարարեցին:

Մի քանի ժողովականներ են որ իրենց կը հակառակին: Յետոյ դառնապէս գանգաւանցան ոստիկանութեան բռնած ընթացքին գէտ, որ անցեալ կիրակի գիշեր (տեպտ. 17ին) երեսուն հայեր ձերբակալած են, որոնք առաւօտուն Եկեղեցին իսկ գտնուած չէին եւ այս խնդրոյ առթիւ անցած դարձածէն բան մը չէին գիտեր: Ուստի ասոր համար ձերբակալեալները դատ բացած են որու գէտ որ պէտք է՝ արդարութիւն պահանջելու համար:

Ձերբակալուողներուն մէջ հրեայ երիտասարդ մ'ալ կը գտնուի եղեր:

Հոստեղի Հայոց համար եւս լուազոյն կ'ըլլար արդարեւ Արեւսանդրոյ Տեղապահին ըրածին պէս ընել Վասն զի երբ տեղւոյս հայերը բազմութիւ ստորագրութեամբ հանրագիր մը տուին եւ պահանջեցին իրմէ որ Պատարագի ատեն Պատրիարքի անունը չյիշուի, նա իսկոյն Երեսփոխան Պատրիարքին գիր մը գրեց եւ անոր խորհուրդ հարցուց: Նա ալ պատասխանեց թէ առ այժմ կատարէ ինչ որ ժողովուրդը կը պահանջէ եւ միւս կողմէն գրէ ի Պօլիս՝ Պատրիարքարանին եւ Երեւանի Տեղապահին ալ ըստ այնմ շարժելով երկու կողմն ալ գոհ ըրաւ եւ տեղւոյս Քաղաքական ժողովին պէս չգրգռեց ժողովուրդը:

Կրտսի թէ Քաղաքական ժողովը ազատ չէ, այլ բռնադատեալ է սոյն խնդրոյ մէջ այսպէս վարուելու: Եւ այդ ճնշման պատճառը կրնայ պարզուիլ հետեւեալ պարզապէս մէջ:

Երկու տարի առաջ երբ Բրէնտէս նազըը հանրմ Պօլսէն վերադարձաւ, ծառայութիւն մը մատուցանելով՝ Մապէյնի հաճոյք պատճառելու բուն եւսանդով վառուած սկսաւ աշխատել: Ուստի ջանաց որ գաղթական հայերը՝ նախ յանցանքներ խոստովանելով Սուլթանէն ներողութիւն խնդրեն՝ իրենց կողմանէ տեղի ունեցած ցաւալի գէպքերուն համար, եւ ապա թուրքիա՝ իրենց տեղերը վերագործուին: (Իրենց մեղքը ուրիշ բան չէ, բայց եթէ այն ընթացքը, որով գաղթած են այն երկրէն, ուր իրենց այրերը սրախողող կ'ըլլային եւ կ'իները կը լլուէին): Ուստի Վասն: Տիգրան վաշային մարդ գրկեց եւ իւր դիտաւորութիւնը պարզելով՝ անոր աշակցութիւնը խնդրեց ի գլուխ հանելու համար սոյն կարեւոր գործը՝ որուն մէջ ընելիք ջանքերուն համեմատ վարձատրութիւն կար:

Վասն: Տիգրան վաշա լուրջ ջանքեր ըրաւ այդ քաղաքական նպատակին համար: Կահիրէի Հայոց Տեղապահին հետ առանձին խորհրդակցեցաւ եւ ջերմապէս ջատագովեց թէ լաւ կ'ըլլայ որ գաղթականները իրենց երկիրը վերագառնան, եւ ասոր համար թուրք կառավարութեան գրութիւնը հայցեն նախ, որպէս զի ներման արժանանան: Ուստի Տեղապահէն խնդրեց որ Բ. Դրան խնդրագիր մը գրէ, որուն մէջ յայտնէ թէ հայ գաղթականները իրենց բրածին վրայ կը գըջան եւ խոստովանելով իրենց յանցանքը կայսեր ներումը կը հայցեն, որպէս զի իրենց տեղերը վերագառնուին:

նան : Տեղապահը առաջին վայրկեանէն իսկ բացէ ի բաց մերժեց այդ առաջարկը : Սակայն Ն. Վսեմաթիւնը դարձեալ պնդեց : Տեղապահն ալ զինքը բարկացնելէն վախնալով պատասխանեց թէ իմ պետիս՝ Պատրիարքին կը գրեմ եւ նա ինչպէս որ կ'ուզէ թող այնպէս տնօրինէ : Բայց ես ինքնին խընդրագիր չեմ մատուցաներ Բ. Գրան, վասն զի անոր հետ ուղղակի յարաբերութեան մէջ մտնելու իրաւատուութիւն չունիմ :

Ահա այդ ատենէն իւր ջանքերը ի գերեւորեալ եւ Ն. Վսեմաթիւնը չյաջողեցաւ հայ գաղթականները ասկից հեռացնելու նպատակին մէջ :

Եւ այսպէսով հակակրօթիւն մը գոյացաւ իւր եւ Տեղապահին միջեւ, որ հուսկ ապա պարտաւորեցաւ հրաժարելու :

ԱՂԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Արդէն չորեքշաբթի օրուան թուով ծանուցած էինք, Կիրակի օրը Եկեղեցւոյ բեմէն քահանայի միջոցաւ եղած պաշտօնական հրատեւր, որուն համաձայն հինգշաբթի օր (28 սեպտ.) ի դիմաց Ժողովրդեան ութը հոգիէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը գացած է Առաջնորդարան, Ընդհանուր կամ Խառն Ժողովէն «չը յիշուի» մասին վերջնական որոշումը ստանալու եւ Ժողովրդեան հաղորդելու համար :

Պատգամաւորութեան անդամաց կողմէ մեզ տրուած տեղեկութեան նայելով, Երեսփոխանական Ժողովէն ներկայ եղած են.

- Արթ. Տէր Մամբէ Գահնայ (նախագահ)
- » Եզնիկ »
- » Սահակ »
- Տիրաք Կարապետ պէյ Շէրիտեան
- Տուսուֆ » Աղիթ
- Սեդրակ էֆ. Գալթիան
- Թովմաս » Բրուտեան

մնացեալք բացակայ :

Քաղաք. Ժողովէն.

- Տիրաք Մովսէս Անանեանց (Գահնայի տ)
- » Արմենակ Պէլլէրեան (անդամ)

երեք կարեւոր անդամք բացակայ :

Պատգամաւորութիւնը Ժողովարարին կից փոքրիկ սենեակի մը մէջ ճիշդ երկու ժամ սպասելէ յետոյ, ուր ուրեմն Քաղաք, Ժողովոյ երկու անդամները կուգան հրաւիրելու զանոնք, որպէս զի իրենց հաղորդուի Ժողովոյ որոշումը :

Ներկայացողներու անդամաց, արհեստին ընտելութեան վերաբերեալ այլ եւ այլ հարցեր ըլլալէ եւ արձանագրուելէ յետոյ, Կարապետ պէյ Շէրիտեան ի դիմաց հոն գումարուած Երեսփոխանական, Քաղաքական եւ Կրօնական Ժողովներու անդամաց, կը յայտարարէ թէ ծանօթ ինդիւրը Երեսփ. Ժողովոյ նկատողութեան պիտի յանձնուի ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն եւ ասոնց նման նպատակէն դուրս կարգ մը անտրամաբանական առարկութիւններ մէջ բերելով կը ջանայ համոզել պատգամաւորները եւ յիւսած գէլ իրենց տալիք որոշումը, որուն համար ինչպէս կը յայտարարէին, հոն գումարուած էին :

Պատգամաւորութիւնը հպարտալով որ Ժողովը պարզապէս այլ եւ այլ ձեւերու տակ ձգձգել եւ ոչնչացնել կ'ուզէ Ժողովրդեան արդար պահանջումները, մանաւանդ Շէրիտեան պէյ երբ կ'առաջարկէ մինչեւ Ընդհ. Ժողովոյ որոշում տալը պատգամաւորներուն պատասխանատու մնալը, այն ատեն պատգամաւորութիւնը յայտարարելով թէ իւր մեկնում վայրկեանէն անգին, ոչ միայն պա-

տասխանատու մնալու պէտքը չլզար, այլ եւ իւր պատգամաւորութեան պաշտօնն ալ աւարտած կը նկատէ, քանի որ Ժողովը պատշաճ կերպով վարուել չուզեր այս մասին, եւ կը մեկնի վնաս ապաւորութիւն մը տանելով իր հետ :

ԿՈՆԴԱԿ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԱՃԻԱՐՅԷ

«ՁԻ ՅԻՇՈՒԻ»Ի ԽՆԴՐՈՅՆ ԱՌԹԻԻ

Ներսէս ծառայ Յիսուսի Քրիստոսի, անհասունելի կամօքն Աստուծոյ նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ, ողջունելու եւ օրհնութեամբ :

Սիրելի Ժողովուրդ Հայոց Եգիպտոսի, վերջին բացառիկ պարագայները ստիպեցին զիս որպէս զի լուծութիւնս խղիմ եւ ուղղիմ միտքարական մի քանի խօսքեր մեր հոգեւոր Ժողովրդեան, սաստելով միեւնոյն ատեն անխիղճ, իրենց պաշտօնին անպիտակեց, խրոխտ եւ դատարկելու — չ'ըսեմ թթուս գլուխ — կղերք :

Սիրելի եղբարք ի Քրիստոս. համբերեցէք ձեր նեղութեանց՝ ասոնց վնասելու յառաջ տանելով Ժողովրդեան իրաւանցը պահպանութեան գործը. վերջին ձերբակալութիւնները շատ ցաւ պատճառեցին ինձ. իմացայ թէ Տէր Մամբէ մ'ալ կայ եղբր գործոյն մէջ դերակատար. առաջ կարծեցի թէ Իսկիւտարի տիրանոչակ Մամբէին հետ է որ գործ ունիք, վերջէն ստուգեցի եղելութիւնը եւ տեսայ թէ ուրիշ մ'է. ինչ փորձանք բան. աւելն Մամբէ ա՛յդպէս կ'ըլլայ : Ձեր ազգային-եկեղեցական իրաւունքները մի դադրիք պահանջելէ. Տէր Մամբէներուն կարողութեան չա՛տ վեր է Ժողովրդեան նուիրական պահանջմանցը դէմ խոչընդոտ ըլլալ :

Եւ դու, Տէր Մամբէ, ինչ է այս բռնած ընթացքը. աշխարհական մը պիտի չիկնէր եւ անպատուուած պիտի զգար ինքզինքը իւր ազգային զգացմունցը մէջ. իսկ դու, սքեմիդ ու փակելիդ տակ ապաստանած չես խղճար ձերբակալման տրտուր գործոյն մէջ առաջնութիւնը անուիլէ. ի՞նչ է այդ ընթացքը շարունակեալ ինչպէս պիտի կարենաս արդարացունել ինքզինքդ վերջին դատաստանին. նայեցայ հայրանեղ արդէն մայր-տոմարիդ պահանջին կողմը չնչին բան մը կայ, իսկ պարտքիդ կողմը . . . ինձ մեծ է պարտքը. չեմ գիտեր ինչպէս պիտի վճարես զանոնք. պատանդութիւն (sequestration) սովորութիւնը հոս ալ կայ, միայն սա տարբերութեամբ որ փոխանակ ապրանքի «հոգիդ» է որ կնքոյ տակ կ'անուի եւ պահեստի տեղն ալ տարտարոսին մէջն է, պահպանութիւնը յանձնուելով սաղայէ ինչ :

Կ'երեւի թէ հոս անցած դարձածներէն ամենեւին տեղեկութիւն չունիս, ապա թէ ոչ այդ տեսակ բաներ բնաւ չպիտի ընէիր :

Գալով վերջին դատաստանին՝ արդէն շարաթապաններուն ըսածին նայելով շատ ժամանակ ալ չկայ այսու հանդերձ զղջայ ըրածիդ վերայ քանի որ դեռ շատ ուշ չէ «լու է անագան քան երբէք» : Եւ ասկից վերջն ալ՝ այդպէս չի գիտցած, խելքդ չի հասած գործերուն միջամուխ մի լինիք, եւ իրբու հայրական խրատ կը պատուիրեմ չքեղ որ ամէն օր քիչ մ'ալ կարգաւ զարգանամ փոխանակ ծոյլ ծոյլ քնանալու : Եթէ կը յուսաս զբամովդ տեղ գնել, այդ ալ անկարելի է. որովհետեւ անգամ մը դիմում եղած է հոս ուր որ անկ է արքայութիւնէն տեղ գնելու համար եւ սակազինը անգամ պատրաստուած էր, բայց խընդիրը գործնական եւքի մը չի յանգեցաւ, հրաման չի տրուեցաւ վերջապէս, չեմ գիտեր թէ ինչու, գուցէ վազրձի միւլի խնդրոյ պատճառաւ : Գիտեմ թէ հիմայ՝ կարգաւոր, Ծ'նունդի, տընօրնէքի, մնուելթաղի եւ այլ անուիք ժամուցներուդ հաշիւներովը կ'ըրանդիս, բայց այդ հաշիւները չեն բաւեր. ես ալ ժամանակին այդ շրջաններէն անցած եմ գիտեմ. ջանայ Ժողովրդեան օգտակար եւ սիրելի հանդիսանալու, այս է անա իմ հայրական պատուէրս :

Յուսամ թէ իմ այս խրատներս քո վերայ բարեբար ազդեցութիւն մը կ'ընեն եւ զիս նորէն չես ստիպեր որպէս զի այս մասին կրկին գրելու հարկին մէջ գտնուիմ :

Օրհնելով քեզ, Հայոց Ժողովուրդ Եգիպտոսի, եւ խնդրելով յիշուիլ որ անձրեւաբեր ցօղէ կրկնային բարիքները քո վերայ :

Մնամ աղօթարար եւլն.

Շ.

Թ. Գ. Թ. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Ե. Բ.

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ, 22 Սեպտ. 99

Յուսաց Ամենապատիւ Պատրիարք Սօփրանիոսի թաղման առթիւ ի դիմաց հայ գաղթականութեան Գեր. Յ. Եպիսկոպոսը քահանայից ի գլուխ մեծաուք թափորին մանակեցելէ վերջ, անցեալ օր ալ պաշտօնապէս այցելեց Յուսաց Պատրիարքարանը հայ գաղութին ցաւակցութիւնն յայտնելու եւ դարձեալ պատրիարքական նոր տեղապահին (Locum Tenentis) Մէլիթիոսին պաշտօնը շնորհաւորելու միանգամայն :

Երկու Օրթօտոքս կղերներու ներկայացուցիչները յարգանքով վերայ ողջաբուրեցին եւ աւուր պատշաճի խօսքեր փոխանակելէ վերջ, Հայ Եպիսկոպոսը Առաջնորդարան վերադարձաւ :

Պատրիարքական Տեղապահ Մէլիթիոսը Սեպտ. 16ին փոխադարձ այցելութեան եկաւ Հայոց Առաջնորդարանը հետն ունենալով իր քարտուղարը եւ հոն փոխանակ մեր հրաժարեցուցի սլ առաջնորդական ներկայացուցիչն, գտաւ մ'ի կոյս մը — Տէր Վահրամ Հայր Սուրբը ըսել կուզեմ — վերջինս չեմ գիտեր թէ ինչ խօսած եւ ինչ լեզուով խօսած կը լինի յոյն Պատրիարքի տեղապահին հետ, եղած անցնորձք ընդունելութեան վրայ բնաւ չեմ կատարած որ ասոր վրայ չեմ գրեր Աւելի հետաքրքրելի է ինձ գիտեալ թէ Գեր. Յ. Եպիսկոպոսը ըլլալիք այդ այցելութիւնէ՛ն, որ առաջ տեղեկութիւն չունէ՛ր, կը կարծեմ թէ այս տեսակ պաշտօնական այցելութեանց օրն ու ժամը նոյն իսկ որոշուած կըլլայ վաղօրօք, հետեւաբար չեմ կրնար Եպիսկոպոսին ի Ռամլէ բացակայիլ մեկնել, ուր կ'ըսուի թէ իւր առողջութիւնը դարձանելու համար գնացած է : Այս տեսակ բաներ կրկու Առաջնորդարաններու միջեւ խորութիւններ ու ցրտութիւններ առաջ կը բերին եւ հայ գաղթականութեան վարկը կը կտորին յաչս օտարաց :

Այս դէպքը ինձ ասիթ տուաւ յիշելու 1894 թուին կատարուած իրողութիւն մը : Երջանկալիշատակ (՝) Գէորգ Մ. Վ. Իւթիւճեանի (վերջինս Եպիսկոպոսացած) օրով էր (ականջը խօսի) Խրայտիներու Պատրիարքը փոխաբան էր Հայոց Առաջնորդարանը այցելել հետն ունենալով բարձրատիման չորս կղերականներ : Առաջնորդարանի զեւանդակի Տիրա Յակոբ Պաղտատիան (անոր ալ ականջը խօսի) ըստ իւր բարի սովորութեան բացակայ էր Առաջնորդարանէն : Մեր Գերապատիւ օտար լեզու չէր գիտեր որ Խրայտիներու պետին հետ խօսի. իւրաքանչիւր (միջախօսութիւն) խօսիլը հարկաւ ամօթ էր, ինչ ընէ՛ն է կը հանդի. ամբողջ քառօր ժամ մը Չաքարիայի լեզուն խօսեցաւ քրտինքի եւ ամօթի զգացումներուն տակ ճրի տեսակէն ճաւ է ընկնով : Թերիմաքի գաճեկի եկաւ Խրայտի Պատրիարք վայելեց իւր սուրճը եւ այսպէս քառօր ժամուայ տեսակցութիւնէ վերջ առանց բառ մը փոխանակելու մնաց բարովը կոխեց եւ առաւ քարկց : Պատուաբեր են այս տեսակ բաները :

ՊԱՊԻԿ ԾԳՆԱԼՈՐ

(՝) Յակոբ Պաղտատիան Աղեքսանդրոյ Առաջնորդարանին քարտուղարն է եղած երկար ժամանակ, առանց հայերէն լեզուն գիտնալու : Իր պաշտօնին պաշտօնը գտնուելէ աւելի մենձ աղաներու պիւլտօներուն ծառայած է ազգին հաշուոյն : Օրին մէկն ալ, զեւ նոր ամս անցած, Ռամլէի երկաթուղոյն տակէն գտնուեցաւ, ոմանք կը հաստատեն թէ այդ ինքնապատիւութիւնը ինքք գիտակցաբար ըրած է պատկերով կրկնութ գծին վրայ, հարկաւ իր մէկ մեղքին համար : Դիւանագրպիներուն մենք խորհուրդ կուտանք, որ այս տեսակ սպանութիւններէ զերծ մնալու համար իրենց սրտին մէջ խղճի խայթեր չունենան, ապա թէ ոչ այս տեսակ դիպիկներ իրենց գլխին ալ կուգայ օր մը :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԱՄԵՐԻԿԱ, Պոսթօն. Ա. Ա. — Ձեր 8 Սեպտեմբերի ստացանքը: Տեղեւոյ համար Արեւելոյսի գործակալ Կենդանիք ձեզ: Վերջին փոսթով ձեր հասցէին զրկուածը չորս ծրար է եւ 80 թիւ կը պարունակէ: Վարուեցէ՛ք ձեր նամակի պարունակութեանը համաձայն: Եթէ ձեզի զրկուածները անբաւական լինին շուտով գրեցէ՛ք մեզ:

ՅԻՒՆՏԷԼՅԻՍ, Բ. Եկ. — Ձեր անդրանիկ նամակը մեզ հասած է:

ՊՈՒԼԿԱՐԻՍ, Սիլիստրէ. Ար. Տ. Տ. Ք. Դ. — Ձեր պատասխանին կ'սպասենք:

ՀԱՅՏԷՐԱՊՍՏ, Գ. Պ. — Ձեր պահանջած թերթերը ամբողջովին Ն. Պ.ի հասցէով փոսթին յանձնեցինք:

ԱՂԵՔԱՆԴՐԻՍ, Դործակալութիւն. — Մ. Գ. Գ. Շ. Գ. Ի. տեւորք ստացականներն նամակաւ պիտի ստանանք: Ձեր տուած երկու հասցէներուն առաջին թիւէն սխալաւ զրկուեցաւ, ի բաց առեալ այն թիւերը, որ ձեր քով կրնան գտնուիլ:

ԳՍՀԻՐԷ, Ն. Մ. Հ. Ա. Յ. Յ. — Համաձայն ձեր փափաքանաց առաջին թիւէն սխալաւ զրկուեցաւ փոսթի միջոցաւ:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ի ԳԱՀԻՐԷ

ԵՐԵՎ ՃԻՒՂԻ ԲԱԾՆՈՒԹԱՊ

ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂՋԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏՔՁԻ

Մանչերու դպրոցը կը գտնուի Անգղիացուց վարժարանի շէնքին մէջ ի Պապ-Էլ-Սալք:

Այլիկանց եւ Մանկապարտիզի համար դատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-Էլ-Շարգալի, Տալուսիէ:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Ֆրանսերէն եւ Արաբերէն լեզուները:

Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի արուի Անգղիերէնի:

Մանկապարտիզի համար պատրաստ է մասնագէտ եւ փորձառու վարժուհի մը եւ մանկապարտիզի վերջին մէթոտներով ու գրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Մանրամասնութեանց համար դիմել, Տխար Հաճի Փիլիպպոս Եագուպիանի ի Մէնչիէ:

12—15

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌ

Օրօգի Պալ վանառասան մօտեր, Կամե-Էլ-Պեմարի ճիւղ գիմացը

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փոռին մէջ, անխարդախ ալիւրէ կը պատրաստուի ԳՍՂՂԻՍԿԱՆ, ԱՆԳՂԻՍԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի եւ կաթի պաքսիմաթներ, եւայլն:

Եկաւօֆ եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց գիմոյ բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ եւ փութով կը կատարուին: 2—50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ տեղական կառավարութեան եւ բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապա-Էլ-Ապիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին գիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն գիմոյները կատարելապէս դո՛ւ պիտի մնան: 5—24

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒՅԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅԵՐՈՒ

ԳՍՀԻՐԷ, — Մուսոյ փողոց, — ԳՍՀԻՐԷ Ս. Ե. Ս. Սեհմալիի վանառասան գիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնաօրի ընտիր տեսակէ բանախլներու մեծ միջերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, ազամանազարդ, ոսկի, արծաթ եւ ճիւղի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանքային նաբնտիր տեսակներէն զարդեղէններ, շրթաներ, օղեր, մասանիներ եւայլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամապորժի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ 18—50

ՏՕՐՔՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԻԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍԱՄԵԱՐՈՅԺ Ապսիճ, Եարե Բուչիւրի, Գիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղուաներ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս աղուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղուաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 7—10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ Տայիւրէի Սանիյի ճիւղ գիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:

Գիները չափաւոր եւ ածան: Փորձ մը միայնկը բաւէ: 10—24

ՏՊԱՐԱՆ-ՎԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ Ի ԳՍՀԻՐԷ ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԻՒՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ սպազարական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրտեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Ընկերադրեանց եւ վաճառականներու սպազարական սուղն պիտոյցներ:

Իւր սպարանին մէջ եղած նորանոր կարգաւորութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները յարմարեցնող ի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտապահութեան եւ գներու չափաւորութեան մէջ:

Եզիպատսի ո եւ է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին:

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ Պապար Մուսուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւզէյինէն փոխադրած է ի Պապար Մուսուր: Ֆրանսական նորածեւութեանց յար եւ նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբ մինչեւ ցարդ գոհ բրած է իրեն դիմող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակոյս չ'վիրցներ:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո՛չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէ՛ք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նասըր) ազատ մնալ: 13—24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բաստըզ) սև, դեղին, կարմիր եւ ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիւանդի արդիւնք տեսնուած է: Եիջը 8 դրշով (2 Փրանք):

Ճերմկցնող ջուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզիպատսի մէջ միակը:

Ակուայի փոշի եւ ջուր: մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակազրոյցները: 6—8